

սրտից արանցն Արեւելից: Վերստին անդրէն հաստատեալ կացցեն ի նոյնութեան, որում ըզձան սիրտք մեր լինել այսպէս, եւ համայնից իսկ յամենայնի: Իսկ դու յօժարեալ ըստ իս ուղեսեցես զմիտս քո առաւել ի տեղիս յայտոսի հաստատութեամբ: Եւ հաւատամ յԱստուած զի շահ եւ օգտութիւն լինի մեծ յոյժ:»

Աւելորդ է ըսել մերձեցման այս եւ ասոր նման ուրիշ փորձեր ալ անզոր մընացին փակելու համար Յակոբեան եւ Եղիազարեան այն տխուր պայքարը որ տեւեց մինչեւ Յակոբ Զուղայեցիի մահը: Վնասակար եւ կորստաբեր պայքար որուն ընթացքին կիրքերը այնքան բորբոքեցան որ կանգ չառին նոյնիսկ զոյ կամ անզոյ իրողութեամբ մասնութեանց առջեւ: Տարակոյս չունինք որ ԳԱՂՏՆԻՔ չմնաց որ չյայտնուեցաւ եւ ամբաստանութիւն չմնաց որ բարձրագոյն չյայտարարուեցաւ: Ուրեմն ծիծաղելի է երբ այս շրջանին դերակատարներուն կը վերագրուի գործեր ու զազափարներ որոնք միայն վերագրողին խելապատիկին մէջ գոյութիւն ունին եւ սչ թէ դերակատարներուն: Գազանի ժողովներ, ազատագրական ցանկութիւններ, ձեռնարկներ, եւայլն, ասոնք երբ կարելի է որոշ ու մէկին հաստատել, բնական է որ գոյութիւն չեն ունեցած, որով ի գուր է ուշացած ժամանակներու եւ մեր օրերու զաղանալուչակ դրողներուն մարդանքները իրենց տենդոտ երեւակայութեան պտուղները իբր իրողութիւն կլլեցնել ջանալ: Պատմութիւնը միշտ պէտք է զրուի առարկայականօրէն եւ փաստացի կերպով եւ ոչ թէ երազատեսութեամբ:

Յակոբ Զուղայեցի մասնակցեցաւ նաեւ Լեհահայոց պաշտպանութեան ընդդէմ անոնց բռնի կաթողիկացման: Եղած են ճիշ թափողներ որոնք ցոյց տալ ուղած են Յակոբ Կաթողիկոսը կերպով մը համամիտ եղած բռնի հաւատագարձութեան, իբր թէ Յակոբ Զուղայեցին չըլլար անհաշտ եւ բունն ընդիմադիրը Հայ եկեղեցւոյ դէմ կատարուած այս ազազակող անարդարութեան եւ բռնաբարութեան: Իրմէ հասած է բողոքագիր մը Աղէքսանդր Հոռովմայ Պապին: Դրժ-

բաղդարար Հայերէն բնագրին չհանդիցայ Հաւատոյ Տարածման Դիւանին մէջ որով պիտի գոհանանք առ այժմ թարգմանութեամբ մը, հաւանաբար լատիներէնէ, որ կրնայ տարբերած ըլլալ իր ոճով բուն հայերէն բնագրէն: Ահա Յակոբի նամակը:

«Տէր Աղէքսանդր»,

«Գերազոյն Պետ Կաթողիկէ Եկեղեցւոյ եւ Յաջորդ՝ վիմական հաւատքով օժտուած Երանաչնորճ Պետրոսի, Հովիւ հօրապէս հովուող Քրիստոսի բովանդակ ուղղափառ Հօտը, բոլոր երկիրներու Վեհաշուք Պապ՝ որուն, ես, ամենախոնարհ ծառան Յիսուսի Քրիստոսի, Յակոբ Կաթողիկոս Մեծ Հայքի, պահապան՝ Գահին Ս. Գրիգորի, մեր Լուսաւորչին, Թաղէոս Առաքելի Յաջորդին, կ'ընծայեմ հաճելի ողջոյն Յիսուսի, եւ Տիրոջ սէրը տրուած՝ ամենայն խոնարհութեամբ, իբրեւ մեր Հոգեւոր Հօր, յուրախութիւն Սրբութեանդ ի Տէր, հանդերձ համայն եկեղեցական ժառանգաւորներովդ եւ հանուր ուղղափառ ժողովուրդներով, անասելի ցնծութեամբ, ամէն: Յետ այսու, դերազոյն պատուոյ արժանացած ձեր Տէրութիւնը զիտնայ մեր ցաւն ու դժուարութիւնները, ինչպէս բացայայտ է Ձեր երկայնամտութեան, ի վաղուց մեր Աղղէն սակաւ ժողովուրդներ կը բնակին Լեհաստան, իշխանութեան ներքեւ Յովհաննէս Գաղիմիր Թագաւորին, եւ հոն եպիսկոպոս մը կայ, Նիկոլ անուն, իրենց հովիւ մեր Աղղէն, եւ իրենց մէջ... (այս կախման կէտերը թարգմանիչ-Հրատարակիչինն է որոնց ինչ նպատակաւ գործածուած ըլլալը չեմ զիտեր: Գուցէ բնագրէն յապաւում եղած է: Յ. Ք.) աղմուկ եւ խռովութիւն: Երկար ժամանակ է ի վեր անոնք մնացին նոյն աղմուկներու եւ խռովութեան մէջ, այսինքն Եպիսկոպոսըն ու ժողովուրդը: Մեր Նախորդին, Փիլիպպոս Կաթողիկոսին օրով, որ Կ. Պոլիս եկաւ, եւ հոն ժամանեց նաեւ Նիկոլ Եպիսկոպոս իր ժողովրդեան աւագանիին հետ, Կաթողիկոսին, մեր Նախորդին, առջեւ, ժողովուրդն ու Եպիսկոպոսը իրարու հանդէպ խաղաղութիւն կնքեցին զբաւոր երզմամբ եւ ուխտով: